Կամավորության լավագույն չափանիշների և հաջողված փորձի ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սեպտեմբեր 2017

Կամավորության լավագույն չափանիշների և հաջողված փորձի
ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հեղինակներ՝

Լյուբեն Պանով, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL)

Էսթեր Հարթեյ, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL)

Հերիքնազ Տիգրանյան, Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ)

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
European Center for Not-for-Profit Law
Address: 1052 Budapest, Apáczai Csere János u. 17 (Hungary)
Phone: (+361) 318 6923 / 483 177
E-mail: info@ecnl.org
Website: www.ecnl.org

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Հասցե՝ Երևան 0002, Սարյան 12
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

Ուղեցույցը ստեղծվել է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» («ECNL») և Հայաստանի «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի» («Հայաստանի ԹԻՀԿ») կողմից «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Սույն ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատու են ECNL-ը և ԹԻՀԿ-ը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Ներածություն և նախապատմություն **4**

Ինչո՞ւ ներգրավել կամավորներ **4**

Ի՞նչ է կամավորությունը **6**

Կամավորի ներգրավման ձևերը և տեսակները **8**

Կամավորի հետ պայմանագիրը **9**

Իրավունքները և պարտավորությունները **10**

Կամավորների իրավունքները 10

Կամավորների պարտավորությունները 14

Հաշվետվությունները **15**

Միջազգային կամավորությունը **17**

Եզրակացություն **18**

Հավելված **20**

Ներածություն և նախապատմություն

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքով (ՀՕ-22-Ն) պատմության մեջ առաջին անգամ հասարակական կազմակերպություններին թույլատրվել է կամավորների ներգրավել իրենց աշխատանքի մեջ: Դա համահունչ է միջազգային չափանիշներին, որոնց համաձայն կառավարություններին առաջարկվում է օժանդակել կամավորական գործունեությանը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր:[1] Կամավորությանը վերաբերող օրենքները և քաղաքականությունները կարող են տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման համար կարևոր շարժիչ ուժ լինել, սակայն անհրաժեշտ է դրանց մշակմանը վերաբերվել առանձնակի խնամքով՝ հասցեագրելով տեղի իրավիճակին բնորոշ կարիքները և նպատակները: Փաստաթղթերի ընդունումից ոչ պակաս կարևոր է դրանք կյանքի կոչելը: Շարունակական և արդյունավետ իրականացման հստակ ծրագրեր չունենալու դեպքում օրենքները և քաղաքականությունները կմնան սոսկ հավակնությունների մակարդակում: Առավել մեծ հաջողության հասած օրենքները և քաղաքականությունները նրանք են, որոնք ուղեկցվում են որոշակի միջոցառումներ, նպատակներ, պարտականություններ, ժամկետներ և շարունակական մշտադիտարկում մանրամասնող գործառնական ծրագրերով:[2]

Սույն ուղեցույցը մշակվել է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» («*ECNL*») կողմից՝ Հայաստանի «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի» («*Հայաստանի ԹԻՀԿԿ*») օժանդակությամբ: Ուղեցույցի նպատակն է օգնել բարեխիղճ կառավարման ներդրմանը կամավորության բնագավառում և աջակցել Հայաստանում դրան վերաբերող իրավական դաշտի և քաղաքականության հետագա բարելավմանը: Ուղեցույցում զետեղված են կամավորության տարբեր բաղադրիչներին առնչվող միջազգային չափանիշները և հաջողված փորձը՝ ներառյալ կամավորության սահմանումներ, ձևեր և տեսակներ, կողմերի իրավունքներ և պարտավորություններ, արտոնություններ և այլն: Տեքստի տարբեր բաժիններում ներկայացվում է նաև Հայաստանի համապատասխան օրենսդրությունը:[3] Ուղեցույցի վերջում բերված են ընդհանուր եզրակացություններ առ այն, թե ինչպես կարելի է ապահովել կամավորության բարեհաջող ներդրումն Հայաստանում:

Ուղեցույցի հավելվածում բերված է կամավորության և կամավորների կառավարման միջազգային չափանիշներին և լավագույն փորձին առնչվող օգտակար նյութերի հավաքածու:

Ինչո՞ւ ներգրավել կամավորներ

Կամավորությունը բազմաթիվ օգուտներ է բերում ընդհանրապես հասարակությանը և մասնավորապես՝ ՔՀԿ-ներին:

- ***Օգնում է սոցիալական խնդիրների լուծմանը:*** Կամավորությունն անհրաժեշտ բաղադրիչ է բոլոր այն ռազմավարություններում, որոնք ուղղված են աղքատության

[1] ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձև, 56/38: Կամավորությանն օժանդակելու վերաբերյալ հանձնարարականներ, A/RES/56/38, պարբ. II (c) (i):
[2] Drafting and implementing Volunteerism Laws and Policies. A guidance Note. UNV, 2011:
[3] Ներկայումս մշակվում է «Կամավորության մասին» օրենքի նախագիծ, որն անդրադառնում է սույն Ուղեցույցի մեջ քննարկված որոշ հիմնախնդիրների: Տե՛ս https://www.e-draft.am/projects/389/about:

կրճատմանը, կայուն զարգացմանը, առողջապահությանը, աղետների կանխարգելմանը և կառավարմանը, ինչպես նաև սոցիալական ինտեգրմանը:[4]

- ***Խթանում է տնտեսության զարգացումը:*** Կամավորությունը լուրջ տնտեսական ազդեցություն ունի: 2017 թվականի «CAF World Giving Index» ինդեքսի տվյալներով[5], աշխարհի բնակիչների 20.8%-ն իրականացրել է կամավորություն, որին բաժին է ընկել համաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3.1%-ը:[6]
- ***Հավասարակշռում է աշխատաշուկան:*** Կամավորություն իրականացնելու հնարավորությունը ժամանակավորապես հավասարակշռում է աշխատաշուկան, որտեղ երբեմն խզում է առաջանում աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև: Ավելին, այն որոշակի «ցատկահարթակ» է դառնում աշխատանք փնտրող կամ կարիերայի նոր ուղիով ընթացող անձանց համար:
- ***Ֆինանսական օգուտ է բերում կազմակերպությանը:*** Կամավորների ժամային ներդրումը կամավորների ներգրավման ոլորտներում վճարվող միջին աշխատավարձի համարժեքով հաշվարկելու դեպքում կստացվեր, որ այդ ներդրումը գերազանցում է կանխիկով նվիրատվությունները: 24 պետությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ կամավորության ֆինանսական արժեքը միջին հաշվարկով կազմում է շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպությունների եկամտի 65%-ը, իսկ կանխիկով նվիրատվությունները՝ 35%-ը:[7]
- ***Փոխլրացնում է վարձու աշխատանքը:*** Կամավորությունը կարող է այնպիսի ծառայություններ ընձեռել, որոնք հեշտորեն չեն մատուցվում վարձու աշխատողների կողմից:
- ***Բերում է նորարարական լուծումներ:*** Հմտությունների և կարողությունների վրա հիմնված կամավորությունը կարող է նորարարական լուծումներ բերել ՔՀԿ-ներին: Մասնագետներն անվճար տրամադրում են իրենց օգնությունը և ծառայությունները՝ նպատակ ունենալով լրացուցիչ փորձ հավաքել որոշակի ոլորտներում, ինչպես նաև՝ նոր լուծումներ փորձարկել:[8]
- ***Խթանում է սոցիալական համերաշխությունը:*** Կամավորությունը կարող է օգնել սոցիալական ներառման և ինտեգրման խորացմանը: Այն ավելացնում է սոցիալական համերաշխությունը, սոցիալական կապիտալը, քաղաքական լեգիտիմությունը և կյանքի որակը տվյալ հասարակությունում:
- ***Աջակցում է անձնական զարգացմանը:*** Կամավորությունը նաև օգնում է կամավորներին: Այն կամավորների մոտ ձևավորում է անձնական բավարարվածության, ձեռքբերման, բարեկեցության և հասարակական կյանքին մասնակցության զգացում:[9] Այն կարող է «բարձրացնել համայնքի երջանկության մակարդակը» և ապահովել կյանքից բավարարվածության ավելի բարձր

---

[4] ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի թիվ 56/38 բանաձևը (10 հունվար, 2000 թ.): Կամավորությանն օժանդակելու վերաբերյալ հանձնարարականներ:
[5] Ինդեքսն հիմնված է աշխարհի տարբեր տարածաշրջանների 139 պետություններում հավաքագրված տվյալների վրա:
[6] CAF World Giving Index 2017- A global view of giving trends, page 13:
[7] Lester M. Salamon and Wojciech Sokolowski, "Volunteering in Cross-National Perspective: Evidence from 24 Countries," Working Papers of the Johns Hopkins Comparative Nonprofit Sector Project, no. 40 (2001), 8, fig. 1.
[8] András Naggyörgy, Civil Support. Presentation at Civil Breakfast by Magnetbank, 14 June 2016, Budapest
[9] Աշխատանքի միջազգային կազմակերպություն (2011 թ.). կամավորական աշխատանքի չափման ձեռնարկ (A Manual on the Measurement of Volunteer Work):

մակարդակ:[10] Նրանք, ովքեր երիտասարդ են կամ գործազուրկ, կարող են հմտություններ ձևավորել կամ հղկել, ձեռք բերել վստահություն և ինքնավստահություն, որն իր հերթին օգնում է նրանց՝ նախապատրաստվելու աշխատանքային զբաղվածության համար: Կամավորությունը տարեցներին հնարավորություն է ընձեռում ներգրավված մնալ, մասնակից լինել ընդհանուր բարի գործերի կատարմանը և զգալ, որ իրենց հմտությունները նախկինի պես արժեքավոր են:[11]

- ***Ավելացնում է քաղաքացիական ներգրավվածությունը:*** Կամավորությունն ավելացնում է քաղաքացիների մասնակցությունն հասարակության կյանքին, օգնում տեղական ցանցերի ձևավորմանը և պատասխանատվության զգացում ձևավորում համայնքի խնդիրների լուծման նկատմամբ:

Ի՞նչ է կամավորությունը

«Կամավորություն», «կամավոր» կամ «կամավորական գործունեություն» եզրույթների միասնական **սահմանում** չկա: Միջազգային մի քանի մարմիններ՝ ներառյալ Միավորված ազգերի կազմակերպությունը,[12] Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և Եվրոպական միության խորհուրդը,[13] սահմանել են կամավորությունը: Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանման համաձայն, կամավորական աշխատանքը «*չվճարվող ոչ պարտադիր աշխատանք է, այսինքն՝ ժամանակ, որ անհատներն անվճար հատկացնում են այնպիսի աշխատանքի համար, որը կա՛մ կազմակերպության միջոցով, կա՛մ ուղղակիորեն կատարվում է այլ՝ իրենց տնային տնտեսության անդամ չհանդիսացող անձանց համար*»: ԵՄ-ի խորհրդի սահմանման համաձայն, «կամավոր գործունեությունը» ներառում է կամավոր գործունեության բոլոր՝ ֆորմալ և ոչ ֆորմալ տեսակները, որոնք իրականացվում են անձի սեփական ազատ կամքով, ընտրությամբ և շահագրգռվածությամբ՝ չունենալով ֆինանսական օգուտ ստանալու նկատառում: Դրանցից օգտվում են անհատ կամավորը, համայնքները և ողջ հասարակությունը: Դրանք նաև գործիքներ են, որոնցով անհատները և միությունները հոգում են մարդկային, սոցիալական, միջսերնդային կամ բնապահպանական կարիքները և մտահոգությունները, և հաճախ իրականացվում են շահույթ չհետապնդող կազմակերպությանը կամ համայնքահեն նախաձեռնությանն օժանդակելու նպատակով:

Այնպիսի ընդհանուր եզրույթների պատշաճ սահմանումը, ինչպիսիք են «կամավորություն» և «կամավորներ» բառերը, հույժ կարևոր է օրենքը կատարողների և հանրության լայն շրջանակների պատշաճ ընկալումը խորացնելու տեսանկյունից: Եվրոպայի խորհուրդը նույնպես պետություններին խորհուրդ է տալիս կամավորական ծառայությունը սահմանել համապետական մակարդակում՝ ընդգծելով դրա կրթական նշանակությունը և

[10] Lester M. Salamon, S. Wojciech Sokolowski, and Regina List, Global Civil Society: An Overview, John Hopkins Comparative Nonprofit Sector Project (2003), 15.
[11] Katerina Hadzi-Miceva Evans: Comparative Analysis of European Legal Systems and Practices Regarding Volunteering. ECNL, OSCE, MCIC, 2010.
[12] Միավորված ազգերի կազմակերպության Կամավորներ, 1999 թվական. «Կամավորությունը կարող է լայն իմաստով բնորոշվել որպես անհատների ներդրումն հանուն իրենց հարևանների, համայնքի կամ ողջ հասարակության բարօրության, որը կատարվում է առանց շահույթ հետապնդելու նպատակի, առանց աշխատավարձի և առանց կարիերայի»:
[13] Եվրոպական միության խորհուրդ. Ակտիվ քաղաքացիությունը խթանող կամավորական գործունեության եվրոպական տարվա մասին որոշում (2011 թ.), էջ 3:

կարևորությունն հասարակության համար:[14] Միջազգային փորձագետները համակարծիք են այն հարցում, որ «հույժ կարևոր է, որպեսզի կամավորության մասին շրջանակային օրենքով նախատեսվեն կամավորների և կամավորական գործունեության հնարավորինս ընդգրկուն և ճկուն սահմանումներ»:[15]

Կամավորության հիմնական առանձնահատկություններն հետևյալն են.

1) ***Կամավորությունը գործունեություն կամ աշխատանք է:*** Կամավորությունը բնաիրեղեն (այսինքն՝ ժամանակի, հմտությունների կամ ծառայությունների) ներդրում է, որը պետք է տարբերակել ապրանքների, կանխիքի կամ այլ արժեքավոր գույքի նվիրատվությունից:
2) ***Կամավորությունը չվճարվող է:*** Կամավորությունն ի սկզբանե առանց վճարման կամ հատուցման իրականացվող գործունեություն է: Այնուհանդերձ, կամավորները կարող են ստանալ թոշակներ կամ իրենց անխուսափելի ծախսերի (օրինակ՝ ճանապարհորդական ծախսերի, կացարանի ծախսերի) փոխհատուցում: Կանխիկով կամ բնաիրեղեն օժանդակության այդ ձևերը, սակայն, չեն կարող էական հատուցում ապահովել այն վայրի տեղական չափանիշներով, որտեղ իրականացվում է կամավորական գործունեությունը:
3) ***Կամավորությունը կատարվում է ազատ ընտրությամբ:*** Կամավորությունը չի կարող պարտադիր լինել: Այն պետք է իրականացվի ազատ կամարտահայտությամբ: Դատարանի որոշմամբ պարտադրվող չվճարվող աշխատանքը բանտային պատժի կամ զինվորական ծառայության շրջանակում չի տեղավորվում կամավորության սահմանման մեջ: Հետխորհրդային պետություններում իրականացվող պարտադիր չվճարվող աշխատանքը նույնպես չի համարվում կամավորություն:
4) ***Կամավորությունն իրականացվում է՝*** նպատակ ունենալով օժանդակել որոշակի գործի կամ օգնել կամավորի տնային տնտեսության կան անմիջական ընտանիքի անդամ չհանդիսացող այլ անձի: Կամավորական գործունեությունը սովորաբար իրականացվում է ի շահ համայնքի, համայնքի շահերը ներկայացնող կազմակերպության, հանրային մարմնի կամ հանրային շահի: Թեպետ անհատ կամավորի տնային տնտեսության կամ ընտանիքի անդամները նույնպես կարող են օգտվել կամավորական աշխատանքից, անհրաժեշտ է, որպեսզի օգուտ ստանան նաև այլ՝ ընտանիքի անդամ չհանդիսացող անձինք: Կամավորությունը պետք է ներառի կամավորության **երկու ձևերը՝** կազմակերպության կամ կառույցի (օրինակ՝ դպրոցի կամ ՔՀԿ-ի) միջոցով կատարվող ֆորմալ կամավորությունը և ոչ ֆորմալ կամավորությունը (այսինքն՝ կամավորական աշխատանքը, որը կատարվում է անհատական հիմունքներով): Որոշ պետություններ տարբերակում են այդ երկու ձևերը և կարգավորում են միայն «կազմակերպության միջոցով իրականացվող» կամավորությունը:[16]

Խնդիրներ կարող են ծագել նաև այն դեպքում, երբ աշխատանքային օրենսգիրքը չի տարբերակում սովորական զբաղվածությունը և կամավորական աշխատանքը: Եթե կամավորի և աշխատողի միջև իրավական տարբերակում չկա, կամավորները կարող են

---

[14] Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94)4 հանձնարարականն անդամ պետություններին Կամավորական ծառայության խթանման վերաբերյալ (1994):
[15] Inter-Parliamentary Union, International Federation of Red Cross and Red Crescent Societies, and UN Volunteers, “A Volunteerism and Legislation: A Guidance Note.":
[16] The legal framework of volunteerism: Ten years after International Year of volunteers 2001:

դիտարկվել որպես անօրինական աշխատուժ: Գործազուրկները կարող են հրաժարվել կամավորությունից՝ վախենալով, որ կամավորական «աշխատանքին» մասնակցության հետևանքով կարող են զրկվել գործազրկության նպաստներից:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով կարգավորվում է կամավորությունը, սակայն չեն նախատեսվում կամավորության և կամավորի սահմանումները: Մյուս կողմից, հղում է արվում «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և ՀՀ աշխատանքային օրենսգրքին: «Բարեգործության մասին» օրենքի համաձայն, կամավորներն « այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին» (9-րդ հոդված): Աշխատանքային օրենսգրքի համաձայն, «կամավոր աշխատանքը եւ օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքը չեն կարող համարվել անօրինական: Այդպիսի աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով» (102-րդ հոդվածի 2-րդ մաս):

Կամավորի ներգրավման ձևերը և տեսակները

Կամավորությունը կարող է տարբեր ձևեր ունենալ՝ թաղային ինքնաբուխ, տեղային նախաձեռնություններից մինչև կազմակերպված, ֆորմալ և անգամ պայմանագրային ներգրավում կանոնավոր և շարունակական հիմունքներով: Ավելին, կամավորները կարող են գործել խմբերով կամ միջազգային ծրագրերի շրջանակում կամ սեփական նախաձեռնությամբ կամ այլոց հրավերով: Նրանց գործունեության շրջանակը, դերը կազմակերպության ներսում և թիրախային խումբը կարող են տարբերվել: Հետևապես, դժվար և անգամ վտանգավոր կարող է լինել կամավորության բոլոր հնարավոր ձևերն օրենքով կարգավորելը:

Հետևյալ հանգամանքներ առավել սերտորեն են կապված իրավական որոշակի նկատառումների հետ, որոնք հարկ է հաշվի առնել Հայաստանում:

1) ***Տևողությունը:*** ՔՀԿ-ները կարող են կամավորների ներգրավել *ամբողջ ժամանակով, ոչ լրիվ ժամանակով, դեպքից դեպք կամ երկարատև հիմունքներով:* Ներգրավման ժամկետը որոշակի նշանակություն ունի կամավորների պայմանագրային ներգրավման տեսանկյունից. ավելի երկարաժամկետ ներգրավման համար երբեմն անհրաժեշտ է լինում ստորագրել գրավոր պայմանագիր:

   «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, «եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր» (տե՛ս ստորև՝ կամավորի հետ կնքվող պայմանագրին վերաբերող կանոնները):

2) ***Կամավորական գործունեության տեսակը:*** ՔՀԿ-ները կարող են կամավորների ներգրավել գործունեության տարբեր ձևերի մեջ և ոլորտներում: Կամավորական գործունեությունը համարվում է բնաիրեղեն (այսինքն՝ ժամանակի կամ ծառայությունների), բայց ոչ՝ ապրանքների, կանխիկի կամ արժեքավոր այլ գույքի ներդրում: Միջազգային չափանիշների և հաջողված փորձի համաձայն, կամավորներին պետք է թույլատրել, որպեսզի նրանք մատուցեն անհրաժեշտ

որակավորումն ունենալու դեպքում մատուցեն օրենքով թույլատրված ցանկացած ծառայություն: Օրենսդիրները պետք է մտապահեն կամավորական գործունեության *բոլոր* հնարավոր տեսակների հնարավոր օգուտները: Միջազգային փորձագետները համակարծիք են, որ «հույժ կարևոր է, որպեսզի կամավորության մասին օրենսդրությամբ նախատեսվեն կամավորների և կամավորական գործունեության հնարավորինս ընդգրկուն և ճկուն սահմանումներ»:[17]

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով որոշակի սահմանափակումներ են նախատեսվում կամավորական գործունեության շրջանակի վերաբերյալ: Մասնավորապես, արգելվում է կամավորներին ներգրավել Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Կամավորի հետ պայմանագիրը

Կամավորները և կամավոր ներգրավող կազմակերպությունները պետք է ազատ լինեն իրենց հարաբերությունների առանձնահատկությունները կարգավորելու հարցում: Իրավական շրջանակը կարող է նախատեսել այդ գործընթացում նրանց ուղղորդող ընդհանուր սկզբունքները: Կամավորությունը տարբեր ձևերով է դրսևորվում՝ տեղի ունենալով տարբեր հանգամանքներում, ուստի օրենքների նպատակը չպետք է լինի կամավորի հետ պայմանագրի մանրամասները կարգավորելը:[18] Որոշ պետություններում օրենքով պահանջվում է, որպեսզի կամավոր ներգրավող կազմակերպությունը գրավոր պայմանագիր կնքի կամավորի հետ որոշակի դեպքերում, օրինակ, եթե կամավորը ոչ լիովին է գործունակ (անչափահաս է), կամ եթե առկա է վտանգ կամավորի անվտանգությանը և առողջությանը (բնական աղետների գոտիներում գործելու դեպքում), կամ երկարաժամկետ ներգրավման և այլ դեպքերում: Օգտակար կլիներ պայմանագրի օրինակելի ձև հրապարակել, որը ցանկության դեպքում կարող է օգտագործվել կամավոր ներգրավող կազմակերպությունների կողմից՝ սեփական պայմանագրի մշակման համար գումար և ժամանակ ծախսելու փոխարեն: Նման օրինակներ կարելի է գտնել Մոլդովայում[19] և Գերմանիայում:[20]

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, «եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում նշվում են՝

- *պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը.*

[17] Inter-Parliamentary Union, International Federation of Red Cross and Red Crescent Societies, and UN Volunteers, “A Volunteerism and Legislation: A Guidance Note."
[18] Katerina Hadzi-Miceva Evans: Comparative Analysis of European Legal Systems and Practices Regarding Volunteering. ECNL, OSCE, MCIC, 2010.
[19] Օրինակելի ձևը ներառում է Մոլդովայի Հանրապետության «Կամավորության մասին» 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 121 օրենքի կատարումն ապահովող կանոնակարգի թիվ 4 հավելվածը:
[20] Գերմանիա. Ռայնլենդ-Պֆալցի օրինակելի ձևը կամավորի և համայնքի/քաղաքի միջև:

- *Կազմակերպության անվանումը.*
- *Կազմակերպության անունից պայմանագիրն ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.*
- *կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.*
- *կամավոր աշխատանքի նկարագիրը և աշխատանքային գործառույթները, իրականացման կարգը և պայմանները.*
- *Կազմակերպության և կամավորի իրավունքները և պարտականությունները.*
- *աշխատաժամանակի ռեժիմը.*
- *պայմանագրի գործողության ժամկետը:*

Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում կարող են ներառվել նաև կամավոր աշխատանքի վերաբերյալ այլ պայմաններ:

Իրավունքները և պարտավորությունները

Կամավորների իրավունքները

Օրենսդրությունը պետք է երաշխավորի կամավորների նվազագույն իրավունքները՝ ներառյալ կամավորական ներգրավման մասին տեղեկացվելու իրավունքը, ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունքը, անվտանգ միջավայրում աշխատելու իրավունքը և գործազրկության նպաստները պահպանելու իրավունքը: Բացի դրանից, իրավական համակարգում կարելի է նախատեսել սոցիալական նպաստներին առնչվող այլ իրավունքներ և պարտավորություններ՝ կամավորությունը խրախուսելու համար, դրանք ներառելով նաև պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական ապահովության համակարգերում: Կամավոր ներգրավող կազմակերպությունը և կամավորները նվազագույն կանոններից զատ պետք է ճկունություն ունենան՝ ազատորեն որոշելու կամավորի ներգրավման լրացուցիչ պայմանները՝ անձնական պայմանավորվածությամբ, գրավոր պայմանագրով կամ կազմակերպության ներքին կանոնակարգերով:

1) ***Տեղեկություններ կամավորի գործունեության, իրավունքների և պարտավորությունների մասին:*** Յուրաքանչյուր կամավոր պետք է նախքան սկսելը տեղեկացված լինի կամավորական ներգրավման իրավունքների, պարտավորությունների և առանձնահատկությունների մասին: Դա նպաստում է իրազեկված որոշման կայացմանը և օգնում նվազագույնի հասցնել հնարավոր թյուրըմբռնումը (օրինակ՝ կամավորը կարող է դասընթացներ ակնկալել, իսկ կազմակերպությունը՝ լրիվ ժամանակով ներգրավում): Մի շարք պետություններում այդ իրավունքն ուղղակիորեն երաշխավորված է օրենքով: Լեհաստանի օրենքով, օրինակ, ամրագրվում է իրավունքների և պարտավորությունների մասին կամավորներին տեղեկացնելու, իսկ հետագայում նաև՝ այդ տեղեկատվությունն հասանելի դարձնելու պարտավորությունը:[21] Նմանապես, Հունգարիայի օրենսդրության համաձայն, կամավոր ներգրավող կազմակերպությունները պարտավոր են անհրաժեշտ կողմնորոշում կազմակերպել և ուղղորդել կամավորներին:[22]

[21] Լեհաստան, «Հանրօգուտ և կամավորական աշխատանքի մասին» օրենքի 47-րդ հոդված:
[22] Հունգարիա, «Հանրային շահից բխող կամավորական գործունեության մասին» 2005 թվականի LXXXVIII օրենքի 8-րդ հոդված:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է աշխատանքային գործառույթների, իրավունքների և պարտավորությունների մասին տեղեկատվություն ստանալու՝ կամավորի իրավունքը, որը պետք է սահմանվի գրավոր պայմանագրում (17-րդ հոդվածի 5-րդ մաս):

2) ***Ծախսերի փոխհատուցումը:*** Կամավորները կարող են իրենց ներգրավման կապակցությամբ ծագող տարբեր ծախսեր ունենալ՝ ներառյալ սննդի ծախսերը, կամավորության վայր հասնելու և վերադառնալու տրանսպորտի ծախսերը, գործուղման ճանապարհածախսերը, վերապատրաստման ծախսերը և այլն: Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ՔՀԿ-ները կարող են իրենց միջոցների հաշվին փոխհատուցում տրամադրել իրենց անունից հանդես եկող բոլոր կամավորներին վերջիններիս կրած ողջամիտ ծախսերի դիմաց:[23]

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց (17-րդ հոդվածի 6-րդ մաս):

3) ***Անվտանգ և առողջ պայմանները և պաշտպանությունն աշխատանքի վայրում:*** Յուրաքանչյուր ոք ունի անվտանգ և առողջ աշխատանքի պայմանների իրավունք:[24] Կամավորները կարող են ներգրավվել հատուկ պաշտպանություն պահանջող աշխատանքում, օրինակ՝ ֆիզիկական աշխատանքում (օրինակ՝ շենքերի վերանորոգում, աղբահավաքում, ֆերմերային և անտառային գործունեություն), օգնել տարեցների խնամքին կամ կամավոր աշխատանք կատարել կենդանիների հետ: Կամավոր ներգրավող կազմակերպությունը պարտավոր է գործող օրենսդրությանը համահունչ ապահովել անվտանգ միջավայր և անհրաժեշտ պայմաններ աշխատանքի ընթացքում պաշտպանության համար:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում են կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմանները (17-րդ հոդվածի 4-րդ մաս):

4) ***Գործազրկության նպաստը:*** Անձը կարող է կամավորական գործունեության մեջ ներգրավվել գործազուրկ լինելու ընթացքում: Կարևոր է, որպեսզի կամավորությունը չազդի գործազրկության նպաստներ ստանալու՝ անձի իրավունքի վրա:

«Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, կամավոր աշխատանքը հիմք չէ գործազրկության նպաստի վճարումը կասեցնելու կամ դադարեցնելու համար (9-րդ հոդված):

<u>Իրավական համակարգով, կամավորության պայմանագրով և կամավոր ներգրավող կազմակերպության ներքին կանոնակարգերով կարող են սահմանվել նաև այլ իրավունքներ: Կամավորների ներգրավման շրջանակն ու պայմանները կարող են լինել</u>

[23] Եվրոպայի խորհրդի հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ:
[24] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդված:

տարբեր և նախատեսեն կողմերի իրավասությունների տարբեր մակարդակ: Օրենսդրությունը պետք է հաշվի առնի այս առանձնահատկությունը և սահմանի բավարար ճկունություն կամավոր ներգրավող կազմակերպության և կամավորի համար համապատասխանաբար ձևավորելու իրենց հարաբերությունները, ներառյալ կամավորի համար սահմանվող իրավունքները:

5) ***Մասնավոր գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանությունը:*** Կամավորները որոշ անձնական տվյալներ են տրամադրում կամավոր ներգրավող կազմակերպությանը, որոնք կարող են զգայուն տեղեկություններ պարունակել (մարգինալացված խմբերին կամ ԼԳԲՏԻ համայնքին օգնող կազմակերպության համար կամավորություն իրականացնելը): Միջազգային չափանիշներով[25] երաշխավորվում է բոլոր անձանց մասնավոր գաղտնիքի՝ ներառյալ մասնավոր և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության հարգման իրավունքը: Ավելին, կամավորների մասնավոր գաղտնիքի և տվյալների պաշտպանության իրավունքը կարող է ուղղակիորեն երաշխավորվել կամավորության պայմանագրով կամ կամավոր ներգրավող կազմակերպության ներքին կանոնակարգով:

> *Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ յուրաքանչյուր անձի երաշխավորվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը (31-րդ հոդված): Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:*

6) ***Արձակուրդը և ամենօրյա հանգիստը:*** Կամավորներին պետք է կամավորության ընթացքում տրամադրել ամենօրյա հանգիստ և արձակուրդ, եթե դրա համար կան բավարար հիմքեր: Օրենքով կարող են որոշակի կանոններ սահմանվել որոշակի տարիքի չհասած կամավորների համար (օրինակ՝ նրանք չեն կարող օրվա ընթացքում աշխատել որոշակի ժամանաքանակից ավելի, կամ նրանց անհրաժեշտ է որոշակի տևողությամբ հանգիստ վերցնել կամավորական գործունեության ընթացքում):

> *«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամավոր աշխատանքի մասին պայմանագրով նախատեսվում է աշխատաժամանակի ռեժիմը՝ ներառյալ հանգստի ժամերը (17-րդ հոդվածի 5-րդ մաս):*

7) ***Կողմնորոշումը և վերապատրաստումը:*** Կամավորները պետք է տեղեկացվեն կազմակերպության մասին, կազմակերպությունում իրենց ներգրավվածության դերի և կազմակերպության ներքին ընթացակարգերի և կանոնակարգերի մասին: Ավելին, ներգրավվածության որոշ դեպքերի համար հատուկ տեսակի գիտելիքներ կամ հմտություններ են պահանջվում: Կամավորները կարող են կամավոր ներգրավող կազմակերպության հետ աշխատելու շահագրգռվածություն ունենալ հենց գործունեության որոշակի ոլորտի մասին ավելին սովորելու համար: Արդյունավետ

[25] ՄԻԵԿ-ի 8-րդ հոդված՝ մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը:

պրակտիկա է կամավորների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, որպեսզի նրանք կարողանան կատարել կամավոր ներգրավող կազմակերպության կողմից իրենց վրա դրված գործառույթները:

8) ***Անհրաժեշտ նյութերը:*** Հակառակ պայմանավորվածության բացակայության դեպքում կազմակերպությունը տրամադրում է անհրաժեշտ նյութեր և պարագաներ, որոնք կամավորին անհրաժեշտ են առաջադրված գործառույթները կատարելու համար (օրինակ՝ նոթբուք համակարգիչ, թուղթ, ներկ և վրձին ներկելու համար): Թեպետ կամավորները նվիրաբերում են իրենց ժամանակը և հմտությունները, նրանցից չի կարելի ակնկալել նաև աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի ներդրում. նրանք դա կարող են անել, բայց դա արդեն կհամարվի բնաիրեղեն ներդրում կազմակերպության գործունեության մեջ:

> *«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, իսկ պայմանագրով սահմանվում են կամավորի աշխատանքի իրականացման կարգը և պայմանները (17-րդ հոդված, 4-րդ մաս և 5-րդ մասի 5-րդ կետ):*

9) ***Ուղղորդումը և վերահսկողությունը:*** Ներգրավվածության ընթացքում կամավորներին անհրաժեշտ են որոշակի տեղեկություններ և ուղենիշներ՝ հատկապես կարևոր որոշումների կապակցությամբ: Շարունակական մասնագիտական վերահսկողությունը և այնպիսի վերահսկող անձի առկայությունը, ում կարելի է դիմել հարցերի և խնդիրների դեպքում, հատկապես կարևոր են որոշակի տարիքի չհասած կամ սահմանափակ գործունակություն ունեցող կամավորների դեպքում: Հունգարիայի օրենսդրությամբ, մասնավորապես, կամավոր ներգրավող կազմակերպությունից պահանջվում է երաշխավորել վերահսկողի առկայությունը 18 տարեկանը չլրացած կամավորների կամ սահմանափակ գործունակություն ունեցող չափահաս կամավորների դեպքում:[26] Արդյունավետ մոտեցում է նաև կամավորի ներգրավման ծրագրի կազմումը և պարբերաբար վերանայումը՝ այն համապատասխանեցնելով կարիքների և շարժառիթների փոփոխություններին:

10) ***Ապահովագրությունը և սահմանափակ պատասխանատվություն:*** Պատահարների կամ սխալների դեպքում պատասխանատվության առաջացումը կարող է լրջորեն արգելակել կամավոր աշխատանքի մեջ ներգրավումը: Ուստի, որոշ երկրներում կամավորները քաղաքացիական օրենսդրությամբ պաշտպանված են քաղաքացիական պատասխանատվությունից համայնքային աշխատանք կատարելու ընթացքում (օրինակ՝ Ավստրալիայում):[27] Դա կարող է կամավորին նույն պաշտպանությունն ընձեռել, ինչ ՔՀԿ-ի աշխատողներին՝ այն դեպքում, երբ ներկայացվի կամավորին առնչվող հայցային պահանջ: Այդկերպ նաև ՔՀԿ-ն պաշտպանված է կամավորի կողմից ներկայացվող հնարավոր հայցային պահանջներից: Որոշ այլ պետություններում, օրինակ՝ Միացյալ Թագավորությունում, այդպիսի իրավական պարտավորություն սահմանված չէ: Այնուհանդերձ, Միացյալ

[26] Հունգարիա, «Հանրային շահից բխող կամավորական գործունեության մասին» 2005 թվականի LXXXVIII օրենքի 8-րդ հոդված:
[27] Ավստրալիա, «Քաղաքացու պատասխանատվության մասին» 2003 թվականի օրենքը:

Թագավորությունում պատասխանատվության վերաբերյալ նորմերի մեծ մասն աշխատողներին պաշտպանում է կազմակերպությունում աշխատելու ընթացքում նրանց դեմ ներկայացված հայցային պահանջներից: Աշխատողների համար սահմանված այդ պաշտպանությունը նաև կամավորներին ընձեռելու դեպքում վերջիններս կկարողանան օգտվել ՔՀԿ-ի ապահովագրական ծածկույթից, եթե հանկարծ կազմակերպությունում կամավոր աշխատելու ընթացքում նրանց դեմ հայցային պահանջներ ներկայացվեն:[28]

11) ***Կամավորական գործունեության ապացույցները:*** Կամավորն իրավունք ունի պահանջել կազմակերպությունում կամավորական աշխատանք կատարելու ապացույց՝ պաշտոնական տեղեկանք (փաստաթուղթ, հավաստագիր):

Կամավորների պարտավորությունները

Կամավորներն իրավունքներից զատ ունեն նաև պարտավորություններ: Հարաբերությունների կամավոր բնույթը նրանց ոչ բոլոր պարտականություններից է ազատում: Դա հատկապես կիրառելի է կամավորության ֆորմալ, երկարատև հարաբերությունների դեպքում, քանի օգնում է պատշաճ ջանասիրությամբ ծառայությունների մատուցմանը:[29]

1) ***Կամավորական գործունեությունը կատարել անձամբ և սեփական կամքով:*** Կամավորությունն իր բնույթով ազատ ընտրության վրա հիմնված անձնական հանձնառություն: Ուստի, կամավորները պարտավոր են առաջադրված գործառույթները կատարել սեփական կամքով և ինքնուրույն:
2) ***Բավարարել իրավական և կազմակերպական կիրառելի կանոնների պահանջները, մասնագիտական և էթիկական պահանջները:*** Կամավորները պետք է կամավորական գործունեությունն իրականացնեն օրինական և արհեստավարժ կերպով: Օրենքը կարող է նման պահանջ ամրագրել (օրինակ՝ Հունգարիայում): Բացի դրանից, կամավորներին պետք է հարգել աշխատանքի վայրում կիրառելի կանոնները և կանոնակարգերը:
3) ***Մասնակցել դասախոսությունների և վերապատրաստման դասընթացների:*** Ինչպես արդեն նկարագրվեց, կամավոր ներգրավող կազմակերպությունը կարող է կամավորին առաջարկել կամ կազմակերպել դասընթացներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել առաջադրված գործառույթները կատարման համար: Ուստի, օրենքով կարելի է նման միջոցառումներին կամավորների մասնակցության պարտադիր պահանջ սահմանել (օրինակ՝ Ռումինիայում):
4) ***Պահպանել տեղեկությունների գաղտնիությունը:*** Կամավորները կարող են կամավորական գործունեություն իրականացնելիս որոշակի գաղտնի տեղեկությունների ծանոթանալ: Կամավոր ներգրավող կազմակերպությունները գաղտնիքի պաշտպանության իրավունք ունեն, որն անհրաժեշտ է հարգել: Կամավորները պարտավոր են գաղտնի պահել գործարար և այլ գաղտնիքները: Կարող է ստորագրվել չբացահայտման պայմանագիր, կամ՝ կամավորության մասին պայմանագրում կարելի է ներառել այդ մասին հատուկ դրույթներ:

[28] http://www.thirdsector.co.uk/guide-insuring-volunteers/article/1437484
[29] Katerina Hadzi-Miceva Evans: Comparative Analysis of European Legal Systems and Practices Regarding Volunteering. ECNL, OSCE, MCIC, 2010:

5) ***Պաշտպանել կազմակերպության գույքը:*** Կամավորները պարտավոր են պաշտպանել կամավորական գործունեության ընթացքում իրենց կողմից օգտագործվող նյութերը և գույքը (օրինակ՝ նոթբուք համակարգիչը): Ռումինիայում, օրինակ, այդ պարտավորությունն ամրագրված է օրենքով:[30]

Բացի դրանից, կամավոր ներգրավող կազմակերպությունը կարող է ունենալ հետևյալ իրավունքները.

1) ***Տեղեկություններ պահանջել կամավորի վերաբյալ***: Կամավոր ներգրավող կազմակերպությունն իրավունք ունի կամավորի վերաբերյալ ստանալ տեղեկություններ, որոնք առնչվում են նրան առաջադրված գործառույթների կատարմանը:
2) ***Արձակել կամավորներին:*** Կամավոր ներգրավող կազմակերպությունն իրավունք ունի արձակել կամավորին: Դրա հիմքում ընկած պատճառները կարող են լինել օրենքների կամ կազմակերպության արժեքների խախտումը, ոչ պատշաճ վարքագիծը, գործառույթների չկատարումը, այլ կամավորների կամ կազմակերպության գործունեությունը խոչընդոտելը պարտավորությունների չկատարման կամ անբավարար հաղորդակցության պատճառով, այլ անձանց վտանգելը և այլն: Արդյունավետ մոտեցում կարող է լինել կազմակերպության ներքին կանոնակարգերում արձակման ներքին կարգը սահմանելը:

Հաշվետվությունները

Պետության կողմից իրականացվող վերահսկողության կամ հաշվետվությունների ներկայացման որևէ համակարգ չպետք է անհարկի վարչական բեռ դառնա կազմակերպության համար և խոչընդոտի կամավորների ներգրավմանը նրանց գործունեության մեջ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամավոր ներգրավող կազմակերպությունը պարտավոր է վարել իր անդամների և կամավորների հաշվառումը (18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Բացի դրանից, կազմակերպությունները պարտավոր են կամավորների թիվը ներառել իրենց հաշվետվություններում, որոնք ենթակա են պարտադիր հրապարակման հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ:[31] Բարեգործական կազմակերպությունները պարտավոր են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի թիվ 274-Ն որոշմամբ սահմանված կարգով արձանագրել կամավորների կատարած աշխատանքը («Բարեգործության մասին» օրենքի 15-րդ հոդված):

[30] Ռումինիա, «Կամավորության մասին» թիվ 195 / 2001 օրենքի 8-րդ հոդված:
[31] Սրա հիման վրա յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 30-ը կազմակերպությունները պետք է հաշվետվություն ներկայացնեն նախորդ տարվա ընթացքում ներգրավված կամավորների քանակի վերաբերյալ: Հաշվետվությունների ձևը դեռևս որոշված չէ:

Խթանները

Եվրոպական չափանիշները պետություններին կոչ են անում իրավական կարգավիճակ և համարժեք սոցիալական պաշտպանություն ընձեռել կամավորներին՝ միևնույն ժամանակ հարգելով նրանց անկախությունը և վերացնելով կամավորության ճանապարհին առկա ֆինանսական խոչընդոտները:[32] Ուստի, պետություններն հաճախ որոշակի խթաններ են ընձեռում կամավորների ավելի ակտիվ ներգրավումը խրախուսելու համար:

- ***Ծախսերի փոխհատուցում:*** Կամավորները կարող են իրենց գործունեության կապակցությամբ ծագող ծախսերի փոխհատուցում ստանալ: Ընդունված է այդ ծախսերն ազատել ֆիզիկական անձանց եկամտահարկից: Այդպես է, օրինակ, Մակեդոնիայում:[33]

  «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց (17-րդ հոդվածի 6-րդ մաս): Դա, սակայն, հարկվում է եկամտահարկով:

- ***Սոցիալական պաշտպանություն:*** Սոցիալական արտոնությունները, օրինակ՝ առողջության ապահովագրությունը, կենսաթոշակը և դժբախտ պատահարներից ապահովագրությունը, կարգավորվում են աշխատանքային իրավահարաբերությունների դաշտում, քանի որ դրանք ուղղակիորեն առնչվում են աշխատավարձին կամ անհատներին վճարվող վարձատրության այլ ձևերին: Կամավորությունը վարձատրություն չի ենթադրում, ուստի՝ այն սովորաբար նախատեսված չէ այդ համակարգերով: Սոցիալական արտոնությունների խնդիր չի ծագում միանգամյա, կարճաժամկետ կամավորության կամ աշխատող անձանց կամ ուսանողների կողմից իրականացվող կամավորության դեպքում: Պետությունները, սակայն, կարող են ցանկության դեպքում սոցիալական արտոնությունները հասանելի դարձնել այն կամավորներին, ովքեր մատուցում են երկարաժամկետ և լրիվ աշխատաժամանակով ծառայություններ: Մոլդովայում, օրինակ, կամավորների կամավորական փորձը ներառվում է թոշակի անցնելիս հաշվարկվող ստաժի մեջ: Օրենսդրությունն ընդհանուր առմամբ պետք է կազմակերպություններին հնարավորություն ընձեռի՝ սոցիալական ապահովության մասնավոր արտոնություններ ընձեռել սեփական միջոցների հաշվին, ընդ որում՝ այդ արտոնությունները չպետք է հարկման ենթակա լինեն: Բացի դրանից, այդ արտոնությունները չպետք է վարձատրություն համարվեն և չպետք է ազդեն կամավորների կարգավիճակի վրա:[34]
- ***Պետական ֆինանսավորումը և ծրագրերը:*** Պետությունները կարող են կամավորությանն աջակցող հատուկ ծրագիր կամ ֆինանսավորում ունենալ:

---

[32] Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 8917 փաստաթուղթը կամավորների կարգավիճակի և դերի բարձրացման մասին՝ որպես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մասնակցությունը Կամավորության միջազգային տարվա (2001 թ.) աշխատանքներին:
[33] Մակեդոնիա, «Կամավորության մասին» օրենքի 13-րդ հոդված:
[34] Katerina Hadzi-Miceva Evans: Comparative Analysis of European Legal Systems and Practices Regarding Volunteering. ECNL, OSCE, MCIC, 2010.

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն իր 1496 (2001) հանձնարարականում Նախարարների կոմիտեին խնդրել է անդամ պետություններին կոչ անել, որպեսզի նրանք աջակցեն՝ հատկապես բյուջետային և այլ միջոցներ նախատեսելով հասարակության համար արժեքավոր կամավորական նախաձեռնությունների մշակման և աջակցության համար՝ միևնույն ժամանակ ապահովելով այդ միջոցների պատշաճ կերպով օգտագործումը և բաշխումը:[35] Կամավորական ծրագրերի համար հատուկ ֆինանսավորում է նախատեսված, օրինակ, Մոլդովայում:

- ***Այլ արտոնություններ:*** Պորտուգալիայում կամավորներն օգտվում են հասարակական տրանսպորտի օգտագործման հատուկ ռեժիմից, որը սահմանված է գործող օրենսդրությամբ:[36]

Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված են կամավորական աշխատանքը խրախուսող խթաններ՝ ի դեմս «տարվա կամավոր» և «պատվավոր կամավոր» կոչումների: «Բարեգործության մասին» օրենքի համաձայն, «տարվա կամավորի» կոչմանը կարող է արժանանալ այն ֆիզիկական անձը, ով որպես կամավոր աշխատել է տարեկան 365 ժամից ավելի, միաժամանակ տվյալ տարում նրա՝ որպես կամավորի աշխատած ժամերի տեւողությունը գերազանցում է մնացած բոլոր կամավորների այդ տարում աշխատած ժամերին: «Պատվավոր կամավորի» կոչմանը կարող են արժանանալ այն ֆիզիկական անձինք, ովքեր հինգ տարի անընդմեջ ճանաչվել են տարվա կամավոր (15-րդ հոդված):

Միջազգային կամավորությունը

Գնալով ավելի լայն տարածում է գտնում անդրսահմանային կամավորությունը: Առանձին պետությունների իրավական դաշտը կարող է խթանել սեփական քաղաքացիների կամավորությունն արտերկրում, ինչպես նաև՝ իրավական պաշտպանությունը հասանելի դարձնել նաև օտարերկրյա այն կամավորներին, ովքեր ծառայություն են իրականացնում տվյալ երկրում: Վերը նշված միջազգային պայմանագրերն հիմնականում հենց ընդունվել են անդրսահմանային այսպիսի կամավորությունը խթանելու նպատակով՝ գիտակցելով դրա արժեքը համերաշխության և համագործակցության ամրապնդման, ինչպես նաև երիտասարդների կրթության կազմակերպման տեսակետներից:[37]

Արտերկրից կամավորների ընդունելն իրավական տարբեր խնդիրներ հետ է կապված թե՛ կամավոր ներգրավող կազմակերպության, թե՛ կամավորի համար, ներառյալ մասնավորապես հետևյալը.

---

[35] Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1496 (2001) հանձնարարականը կամավորների կարգավիճակի և դերի բարձրացման մասին՝ որպես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մասնակցությունը Կամավորության միջազգային տարվա (2001 թ.) աշխատանքներին:
[36] Պորտուգալիա, «Կամավորության մասին» թիվ 71/1998 օրենքի 7(1)i) հոդված:
[37] Տե՛ս, օրինակ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94)4 հանձնարարականն անդամ պետություններին Կամավորական ծառայության խթանման վերաբերյալ (1994):

- ***Հարկերը:*** Արտերկրում կամավորության հետ կապված ծախսերի (ճանապարհի ծախս, կացարան, օրապահիկ) հատուցումը որպես կանոն չպետք է հարկման ենթակա լինի ծագման երկրում կամ ընդունող երկրում: Հունգարիայի օրենքի[38] համաձայն, օրինակ, արտերկրում հունգարացի կամավորներին կամ Հունգարիայում կամավոր աշխատանք կատարող օտարերկրացիներին վճարվող օրապահիկը վարձատրություն չի համարվում՝ պայմանով, որ այն չգերազանցի ընդունված նվազագույն պարտադիր աշխատավարձի 20%-ը:
- ***Վիզա, հաշվառում և կացության թույլտվություն:*** Օտարերկրացի կամավորների ներգրավելու հաջորդ խոչընդոտը վիզան է: Կամավորության իրավական կարգավիճակի բացակայության դեպքում այդ կամավորները չեն կարողանում տվյալ պետությունն այցելելու իրենց նպատակներն արտացոլող վիզա ստանալ: Այդ պարագայում հնարավոր կամավորները կարող են միայն տուրիստական վիզա ստանալ, որը սահմանափակ տևողությամբ է և իրավական հիմք չի ընձեռում կամավորներին հասանելիք իրավունքների համար: Ուստի, պետությունները պետք է օտարերկրացիներին թույլ տան կամավորական ծառայություններ մատուցել վիզաների հատուկ ռեժիմով: Ռումինիայի օրենքը, օրինակ, օտարերկրացի կամավորներին իրավունք է ընձեռում կացության թույլտվություն ստանալ իրենց կամավորական գործունեության ժամկետով: Նույնը գոյություն ունի Հունգարիայում:[39]
- ***Ապահովագրությունը և սոցիալական արտոնությունները:*** Առողջության և/կամ ճամփորդական ապահովագրությունը որպես կանոն վիզա ստանալու նախապայման է: Ուստի, արդյունավետ է այն մոտեցումը, երբ կամավոր ներգրավող կազմակերպությունը կազմակերպում է կամավորի ապահովագրությունը: Դա հատկապես կարևոր է օտարերկրացի այն կամավորների համար, ովքեր չեն օգտվում երկրի առողջապահական համակարգի այն ծառայություններից, որոնք ինքնաբերաբար հասանելի են տվյալ երկրի քաղաքացիներին:

Եզրակացություն

Հիմնվելով ներկայացված չափանիշների և հաջողված փորձի վրա, պետությունը կարող է օժանդակել հասարակական կազմակերպություններում կամավորությանը մի շարք եղանակներով՝ ներառյալ մասնավորապես.

1. ***Լրացուցիչ ուղենիշներ և երաշխիքներ կամավորության նվազագույն չափանիշների կապակցությամբ՝ օրենքների և քաղաքականությունների միջոցով***: «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքով պատմության մեջ առաջին անգամ ճանաչվել է կամավորությունը, որը կարևոր քայլ է Հայաստանում կամավորության համար բարենպաստ միջավայր ձևավորելու ուղղությամբ: Օրենքի 17-րդ հոդվածով կարգավորվում են կամավորության որոշ առանձնահատկություններ՝ ներառյալ կամավոր գործունեության շրջանակի, պայմանագրերի, ծախսերի հատուցման և վեճերի լուծման կանոնները: Այնուհանդերձ, օրենքը չի ներառում բարեհաջող կատարման համար անհրաժեշտ այլ

[38] «Հանրային շահից բխող կամավորական գործունեության մասին» Հունգարիայի 2005 թվականի LXXXVIII օրենքի 2 (3) h) հոդված:
[39] http://www.bmbah.hu/index.php?option=com_k2&view=item&layout=item&id=412&Itemid=371&lang=hu

կարևոր սահմանումներ և դրույթներ, մասնավորապես. 1) «կամավորություն» և «կամավոր» եզրույթների իրավական սահմանումը, 2) կողմերի՝ կամավորների և նրանց կամավոր ներգրավող կազմակերպությունների նվազագույն իրավունքները և պարտավորությունները, 3) պատասխանատվության վերաբերյալ կանոնները, 4) կամավորությամբ զբաղվելու խթանները, և 5) միջազգային կամավորության վերաբերյալ հատուկ դրույթներ: Թվարկված առանձնահատկությունների կանոնակարգումը կարող է կամավորական հարաբերություններով զբաղվելու համար երաշխիքներ և խթաններ ընձեռել թե՛ կամավոր ներգրավող կազմակերպությունների, թե՛ կամավորների համար:

2. ***Այլ կանոնները փոխադարձ համաձայնությամբ որոշելու՝ կողմերի ճկունությունը***: Կամավորությունը կարող է իր բնույթով խիստ տարբեր լինել՝ կախված ժամկետից, տարածքից, ներգրավման շրջանակից և բազմաթիվ այլ գործոններից: Ուստի, նվազագույն կանոններից զատ, կամավոր ներգրավող կազմակերպությունը և կամավորները պետք է ճկունություն ունենան՝ ազատորեն սահմանելու կամավորի ներգրավման այլ պայմանները՝ կա՛մ փոխադարձ համաձայնությամբ, կա՛մ գրավոր պայմանագրով և/կամ կամավոր ներգրավող կազմակերպության ներքին կանոնակարգերով:
3. ***Կամավորությանը վերաբերող ցանկացած օրենսդրական նախաձեռնության լայն հանրային քննարկումներ:*** Կարևոր է կամավորության մասին օրենսդրություն մշակելիս լայն քննարկումներ կազմակերպել բոլոր շահագրգիռ անձանց (ՔՀԿ-ների, կամավորների, փորձագետների և այլոց) հետ: Կամավորության մշակույթը մեծապես կախված է տեղի ձևավորված պրակտիկայից, և կամավորներն կամավոր ներգրավող կազմակերպության օգնությամբ կարող են կարիքներից ելնելով միասին որոշել լավագույն մոտեցումը հարաբերությունների կարգավորման առումով: Քննարկման հարցադրումներից կարող է լինել, օրինակ, ձեռնարկատիրական գործունեության մեջ կամավորների ներգրավումը սահմանափակելու հնարավոր պատճառաբանությունը: Նոր կանոնները կգործեն՝ արձագանքելով տեղի կարիքներին և կամավորության տեղական մշակույթին: Օրենքները պետք է նպաստեն Հայաստանում բարեգործական գործունեության իրականացմանը՝ բնավ չարգելակելով ինքնաբուխ նախաձեռնությունները, չծանրաբեռնելով կազմակերպություններին և կամավորության որոշակի տեսակների համար չնախատեսելով մյուսների համեմատ ավելի շահեկան կարգավորումներ:
4. ***Կամավորության խրախուսումը կոնկրետ խթանների միջոցով:*** Կամավորությունը չպետք է ծանրաբեռնող լինի ո՛չ կամավորների, ո՛չ կամավոր ներգրավող կազմակերպությունների համար: Պետությունները պետք է ոչ միայն խթանեն կամավորությունը՝ այն ճանաչելով որպես մարդկանց կարևոր նախաձեռնություն, այլ նաև՝ ապահովեն, որպեսզի նրանց կամավորական գործունեությունը կապված չլինի հաշվետվություններ ներկայացնելու ծանր կանոնների կամ լրացուցիչ հարկերի հետ: Ավելին, կամավորությունը կարելի է խրախուսել՝ կամավոր ներգրավող կազմակերպությունների համար սահմանելով ուղղակի խթաններ, կամավորական ծրագրերի համար նախատեսելով պետական ֆինանսավորում, կամավորներին ընձեռելով նորարարական սոցիալական արտոնություններ, և այլն: Հայաստանի օրենսդրությամբ դեռևս նախատեսված չեն խթաններ կամավորության համար, եթե հաշվի չառնենք կոչումները:

Հավելված

Միջազգային և եվրոպական չափանիշները

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձև, 56/38: Կամավորությանն օժանդակելու վերաբերյալ հանձնարարականներ, A/RES/56/38, պարբ. II (c) (i):

http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/56/38&referer=http://www.un.org/depts/dhl/resguide/r56_resolutions_table_eng.htm&Lang=E

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեա (2015 թ.). Կամավորների ինտեգրումը հաջորդ հարյուրամյակում: Գլխավոր քարտուղարի զեկույցը: A/70/118: https://www.unv.org/sites/default/files/2015%20Report%20of%20the%20SG%20-%20Integrating%20volunteering%20in%20the%20next%20decade.pdf

Եվրոպայի խորհրդի CM/Rec(2007)14 հանձնարարականը Եվրոպայում ՀԿ-ների իրավական կարգավիճակի վերաբերյալ:

https://rm.coe.int/16807096b7

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (94)4 հանձնարարականն անդամ պետություններին Կամավորական ծառայության խթանման վերաբերյալ (1994):

http://pjp-eu.coe.int/documents/1017981/1668257/COE_rec_94_4E_en.pdf/499588cf-93cc-4595-b076-e70ba6202309

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 8917 փաստաթուղթը կամավորների կարգավիճակի և դերի բարձրացման մասին՝ որպես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մասնակցությունը Կամավորության միջազգային տարվա (2001 թ.) աշխատանքներին:

http://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=9136&lang=en

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1496 (2001) հանձնարարականը կամավորների կարգավիճակի և դերի բարձրացման մասին՝ որպես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մասնակցությունը Կամավորության միջազգային տարվա (2001 թ.) աշխատանքներին:

http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=16868&lang=en

Inter-Parliamentary Union, International Federation of Red Cross and Red Crescent Societies, and UN Volunteers, “A Volunteerism and Legislation: A Guidance Note."

Համեմատելի օրենսդրություն

«Քաղաքացու ազատությունների մասին» Ավստրալիայի 2003 թվականի օրենքը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝

https://wiki.qut.edu.au/pages/viewpage.action?pageId=5250988

Գերմանիա. Ռայնլենդ-Պֆալցի օրինակելի ձևը կամավորի և համայնքի/քաղաքի միջև:

https://lbz.rlp.de/fileadmin/lbz/Ueber_uns/Publikationen/Arbeitshilfen/mustervertrag-ehrenamt.pdf

Հունգարիա, «Հանրային շահից բխող կամավորական գործունեության մասին» 2005 թվականի LXXXVIII օրենքը:

https://net.jogtar.hu/jr/gen/hjegy_doc.cgi?docid=a0500088.tv

Մակեդոնիա, «Կամավորության մասին» օրենքի 13-րդ հոդվածը: http://www.icnl.org/research/library/files/Macedonia/Volunteering_Eng.pdf

Մոլդովայի Հանրապետության «Կամավորության մասին» թիվ 121 օրենքը և դրա կատարումն ապահովող իրավական ակտերը:

https://www.google.hu/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=19&ved=0ahUKEwinicre4JXWAhUoYpoKHSPpAZw4ChAWCGYwCA&url=http%3A%2F%2Flex.justice.md%2FUserFiles%2FFile%2F2012%2Fmo49-52ru%2Fanexa%2520nr.4_158.doc&usg=AFQjCNGtL1fnfmpkkPjAZb-4mIJj00wHsw

Լեհաստան, «Հանրօգուտ և կամավորական աշխատանքի մասին» օրենքը:

http://www.icnl.org/research/library/files/Poland/pbolaw.pdf

Պորտուգալիա, «Կամավորության մասին» թիվ 71/1998 օրենք:

http://www.voluntariado.pt/preview_documentos.asp?r=43&m=PDF

Ռումինիա, «Կամավորության մասին» թիվ 195 / 2001 օրենքը:

http://www.icnl.org/research/library/files/Romania/volunteer.pdf

Հայաստանի Հանրապետության վերաբերելի օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:

http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm&enc=utf8

http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng

Քաղաքացիական օրենսգիրք: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112635

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-22-Ն օրենք: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110802

Աշխատանքային օրենսգիրք: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107116

«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=43682

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի թիվ 274-Ն որոշումը Բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության և կամավորների կատարած աշխատանքի հաշվառման կարգը սահմանելու մասին:

http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=10725

Հայաստանի վերաբերյալ նյութեր

Aslanyan, Svetlana; Adibekian, Aharon; Ajabyan, Nelli; Coe A., Barbara (2007): *A Civil Society in Armenia: From a Theoretical Framework to a Reality.* CIVICUS Civil Society Index Report for Armenia. http://www.academia.edu/849899/CIVIL_SOCIETY_IN_ARMENIA_FROM_A_THEORETICAL_FRAMEWORK_TO_A_REALITY

CIVICUS Civil Society Index Project (2010): Culture of Volunteerism in Armenia. http://www.civicus.org/images/stories/csi/csi_phase2/Volonterism_Eng-web.pdf

Yevgenya Jenny Paturyan, Valentina Gevorgyan: *Volunteering in Armenia: Leaving the Soviet Legacy Behind?* https://link.springer.com/chapter/10.1007%2F978-3-319-39899-0_12

Հրապարակումներ

CAF World Giving Index 2017. A global view of giving trends. https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/cafworldgivingindex2017_2167a_web_040917.pdf

Child Rights and You (2013): Volunteer Policy Manual. http://www.cry.org/resources/pdf/va/CRY-Volunteer-Policy-Manual-2013.pdf

NAFSA Association of International Educators (2002): *Recruitment and Management of Volunteers in Educational Advising Centers. A Manual.* NAFSA 54th Annual Conference San Antonio, Texas, May 26-31, 2002. http://www.bibl.u-szeged.hu/oseas/volunteer_manual.html

European Volunteer Centre CEV (2015): Volunteer Measurement in Europe. http://www.cev.be/uploads/2015/03/Report_CEV_Volunteer_Measurement_Seminar_18March_Brussels.pdf

European Volunteer Centre CEV (2016): *Policy Statements on Volunteering Issues in Europe.* http://www.cev.be/uploads/2016/11/CEVPolicyStatementsonVolunteeringIssuesinEurope-3.pdf

Gaskin, Katherina (2003): *A choice blend. What volunteers want from organisation and management.* A report for the Institute for Volunteering Research and the England Volunteering Forum. https://www.scribd.com/document/352272439/A-choice-blend-What-volunteers-want-from-organisation-and-management

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (2011 թ.). կամավորական աշխատանքի չափման ձեռնարկ (ILO (2011): *Manual on the Measurement of Volunteer Work):* http://www.ilo.org/stat/Publications/WCMS_162119/lang--en/index.htm

T-Kit on International Voluntary Service. *(2002) Council of Europe publishing*. https://www.euromedyouth.net/IMG/pdf/tkit5-2.pdf

Johns Hopkins University Office of News and Information (2008): *Mapping Volunteer Work around the World: World's Labor Statisticians Adopt New Guidelines for Measuring Volunteering*," *News Release* (December 19, 2008).

Katerina Hadzi-Miceva Evans: *Comparative Analysis of European Legal Systems and Practices Regarding Volunteering*. ECNL, OSCE, MCIC, 2010. http://www.ecnl.org/dindocuments/203_Analysis%20of%20Volunteer%20laws%20and%20practices_EN.pdf

Lester M. Salamon and Wojciech Sokolowski (2001): *Volunteering in Cross-National Perspective: Evidence from 24 Countries*. Working Papers of the Johns Hopkins Comparative Nonprofit Sector Project, no. 40), 8, fig. 1. https://www.researchgate.net/publication/237649701_Volunteering_in_Cross-National_Perspective_Evidence_From_24_Countries

Lester M. Salamon, S. Wojciech Sokolowski, and Regina List, Global Civil Society: *An Overview*, John Hopkins Comparative Nonprofit Sector Project (2003), 15

McClintock, Norah (2004): Understanding Canadian Volunteering: *Using the National Survey of Giving, Volunteering and Participating (NSGVP) to Build Your Volunteer Program*. Canadian Centre for Philanthropy. http://www.imaginecanada.ca/sites/default/files/www/en/giving/reports/understanding_volunteers.pdf

NCVO *Good Practice of Volunteer Management*: https://knowhownonprofit.org/studyzone/good-practice-in-volunteer-management

Service Leader.org: *Creating a Volunteer Handbook*. https://www.serviceleader.org/sites/default/files/file/VolunteerHandbookTemplate2.pdf

TACSO P2P (2015): *Volunteering and Legislative Framework. Good Practices and EU Standards.* Event report. http://old.tacso.org/doc/p2p20151217_report_mn.pdf

International Center for Not-for-Profit Law, ICNL (2011): *The legal framework of volunteerism: Ten years after International Year of volunteers 2001*. http://www.icnl.org/research/trends/trends2-1.pdf

IAVE – The International Association for Volunteer Effort (2001): *The Universal Declaration on Volunteering* https://www.iave.org/advocacy/the-universal-declaration-on-volunteering/

UN Volunteers (2015): *State of the World's Volunteerism Report – Transforming Governance*. http://www.volunteeractioncounts.org/en/swvr-2015.html

Verified Volunteers (2016): *Volunteer Screening Trends & Best Practices Report: 2017*. http://verifiedvolunteers.com/resources/2017Research_Website

Volunteering Australia: *The foundations of best practice*. https://www.volunteeringaustralia.org/policy-advocacy/best-practise/

Volunteering Australia Inc. (2002): *National Standards for Involving Volunteers in Not for Profit Organisations* (National Standards). 2nd edition. https://www.volunteeringaustralia.org/national-standards-for-best-practice-in-the-management-of-volunteers/

Volunteer Centre of Camrose and District (2008): *Creating an Orientation Manual for Volunteers A Template for Non-Profit Organizations.* https://sustainingplaces.files.wordpress.com/2013/05/volunteer-orientation-manual.pdf

Volunteering England: *Volunteers rights inquiry.* https://www.energizeinc.com/sites/default/files/Guides_and_Report/Volunteer-Rights-Inquiry-Interim-Report.pdf

Volunteering New Zeeland: *Best Practise Guidelines. For Volunteer-involving Organisation*. http://www.volunteeringnz.org.nz/best-practice/

Volunteer Now (2010): *Standards in volunteering-involving organizations.* http://www.volunteernow.co.uk/fs/doc/publications/standards-in-volunteer-involving-organisations-nl.pdf

Volunteer Scotland: *Good practice guides.* http://www.volunteerscotland.net/organisations/resources/good-practice-guides/

Wisener, Robin (2009): *Attaching Economic Value to Volunteer Contribution. Draft.* Volunteer Canada http://volunteer.ca/content/discussion-paper-attaching-economic-value-volunteer-contribution